# Ի՞նչ է նշանակում գործել հավատքով

ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆԻ ՍԵՄԻՆԱՐԻԱՅԻ ՆՅՈՒԹ

**Կարդացեք *Վարդապետության սերունդն հիմնարար փաստաթղթի* (2022) «Ձեռք բերել հոգևոր գիտելիքներ» բաժնի 1-2 և 5-7 պարբերությունները և Տասներկու Առաքյալների Քվորումից երեց Նիլ Լ. Անդերսենի հետևյալ հայտարարությունը: Ուսումնասիրելիս փնտրեք, թե ինչ է նշանակում գործել հավատքով, և ինչը կարող է օգնել ձեզ կիրառել այս սկզբունքը հարցեր ունենալու դեպքում:**

Հավատքը պատահաբար մեզ վրա չի իջնում, ոչ էլ մեր անդրանիկության պարգևն է: Հիսուս Քրիստոսի հանդեպ հավատքը երկնային պարգև է, որը գալիս է, երբ ընտրում ենք հավատալ և երբ փնտրում ու ամուր բռնում ենք այն: Ձեր հավատքի ապագան կերտում է ոչ թե պատահականությունը, այլ ընտրությունը:

Հավատքը երբեք բոլոր հարցերին պատասխան չի պահանջում, այլ հաստատում ու քաջություն է փնտրում՝ առաջ շարժվելու համար երբեմն ընդունելով. «Ես չգիտեմ ամեն բան, սակայն գիտեմ բավականաչափ, որպեսզի առաջ գնամ աշակերտության ճանապարհով»:

Համառ կասկածների մեջ խորասուզվելը, որը լիցքավորվում է անհավատների ու անհավատարիմների պատասխաններով, թուլացնում է մարդու հավատը Հիսուս Քրիստոսի և Վերականգնման հանդեպ: «Շնչաւոր մարդն Աստուծոյ Հոգու բաները չէ ընդունում, որովհետեւ նորանք յիմարութիւն են նորա համար» [Ա Կորնթացիս 2.14 ]:

Թեև հավատքի ձեր կրակը սկզբում կարող է փոքր լինել, արդար ընտրությունները բերում են ավելի մեծ վստահություն Աստծո հանդեպ և ձեր հավատքն աճում է (Նիլ Լ. Անդերսեն, «Հավատքը պատահականության արդյունք չէ, այլ՝ ընտրության», *Ensign* կամ *Լիահոնա,* նոյեմբեր 2015, 65–67):

**Ձեր կարծիքով ինչո՞ւ է կարևոր գործել հավատքով, երբ ունենք հարցեր կամ մտահոգություններ:**

**Ի՞նչ եք սովորել այս ընթերցումներից այն մասին, թե ինչ է նշանակում գործել հավատքով:**

ՀԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ
ՎԵՐՋԻՆ ՕՐԵՐԻ ՍՐԲԵՐԻ
ԵԿԵՂԵՑԻ

© 2022 by Intellectual Reserve, Inc. All rights reserved. Տարբերակ. 2/21: *What Does It Mean to Act in Faith?*-ի թարգմանությունը.
Armenian. PD60012661 201. Printed in the United States of America